ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/30 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Ք. Երևան **«16» հունվարի 2024թ.**
ժամը՝ 15:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«15» դեկտեմբերի 2023թ. թիվ 984** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Վայոց ձորի մարզի Մարտիրոս համայնքի կրթահամալիրի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/30** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթցակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Էմանուել Իվանյան՝ Հանձնաժողովի նիստը նախագահող
Սերգեյ Հարությունյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Աշոտ Սահակյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արամ Գալստյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

1.1 «Ն.Ռ.Վ.Ա.Դ» ՍՊԸ-ի, «Մավշին» ՍՊԸ-ի և «Էկո բիլդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակիցներ) կողմից ներկայացված հայտերը՝ կից փաստաթղթերով, ենթակա են հետագա գնահատման:

2. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված.

Չափաբաժին 1

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման

					առկայությունը (առկա է/ առկա չէ)
1	«Ն.Ռ.Վ.Ա.Դ» ՍՊԸ	932 295 193 (ինը հարյուր երեսուներկու միլիոն երկու հարյուր ինսունհինգ հազար հարյուր ինսուներեք)	186 459 039 (հարյուր ութսունվեց միլիոն չորս հարյուր հիսուն ինը հազար երեսունինը)	1 118 754 232 (մեկ միլիարդ յոթ հարյուր տասնութ մլիլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր երեսուներկու)	առկա չէ
2	«Մավշին» ՍՊԸ	921 432 500 (ինը հարյուր քսանմեկ միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր)	184 286 500 (Հարյուր ութսունչորս միլիոն երկու հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր)	1 105 719 000 (Մեկ միլիարդ հարյուր հինգ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար)	առկա է
3	«Էկո բիլդինգ» ՍՊԸ	1 146 791 202 (մեկ միլիարդ հարյուր քառասունվեց միլիոն յոթ հարյուր ինսունմեկ հազար երկու հարյուր երկու)	229 358 240 (երկու հարյուր քսանինը միլիոն երեք հարյուր հիսունութ հազար երկու հարյուր քառասուն)	1 376 149 442 (մեկ միլիարդ երեք հարյուր յոթանասունվեց միլիոն հարյուր քառասունինը հազար չորս հարյուր քառասուներկու)	առկա է

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները (Հավելված 2) համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահովումներում արտացոլված գումարները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ «Ն.Ռ.Վ.Ա.Դ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը:

3. Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

3.1 «Մավշին» և «Էկո բիլդինգ» ՍՊ ընկերությունների՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակցի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակիցների՝

նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

3.2 Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքների ձևով, և նշված երաշխիքները Մասնակիցների կողմից ներկայացվել են լուսապատճենված տարբերակով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված երաշխիքի թողարկման իսկությունը:

4. Հանձնաժողովը որոշեց.

4.1 Սույն արձանագրության 2-րդ բաժնի 2.2-րդ կետի հիմքով մերժել **«Ն.Ռ.Վ.Ա.Դ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը:

4.2 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.1-ին կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ **«Մավշին» և «Էկո բիլդինգ» ՍՊ ընկերությունների**՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

4.3 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկերին՝ պարզելու Մասնակիցների բանկային երաշխիքների իսկությունը:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 4-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի նիստը

նախագահող՝

Էմանուել Իվանյան _____

անդամներ՝

Սերգեյ Հարությունյան _____

Աշոտ Սահակյան _____

Արամ Գալստյան _____

Նարեկ Աղաջանյան _____

քարտուղար՝

Օֆելյա Կիրակոսյան _____